ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«14» 04 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0075-21

Ձեռնարկողը՝ ***«Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ»***
ք. Երևան, Մ. Բաղրամյան 6

Գործունեությունը՝ ***Գյումրիի «Բարեկամություն» զբոսայգու վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0075-21

«14» 04 2021թ.

Գյումրիի «Բարեկամություն» զբոսայգու վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ»
Ներկայացված նյութեր՝	- Գնահատման հաշվետվություն (Բ կատեգորիա) - նախագծային փաստաթուղթ
Տեղադրման վայրը՝	Շիրակի մարզի Գյումրի համայնք,

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գ. Նժդեհ 1/1 «Բարեկամություն» զբոսայգու տարածքում՝ Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամի կողմից:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 8 կետի համաձայն նախատեսվող գործունեությունը Բ կատեգորիայի է:

Նկարագրական մաս. Գործունեության նպատակն է՝ «Բարեկամություն» զբոսայգու տարածքում ինժեներական ցանցերի և ենթակառուցվածքների իրականացում, զբոսայգու տարածքի արդիականացում, հանգստի ու ժամանցային միջավայրի ձևավորում, հանրային և զբոսաշրջային ենթակառուցվածքների, կանաչապատ գոտիների ստեղծում:

Համաձայն գնահատման հաշվետվության «Բարեկամություն» զբոսայգու տարածքը զբաղեցնում է մոտ 7.2 հա: Տարածաշրջանի ռելիեֆը հարթավայրային և նախալեռնային է: Համաձայն իրականացված ուսումնասիրությունների տարածքի ինժեներաերկրաբանական պայմանները գնահատվում են բարենպաստ շինարարական աշխատանքների իրականացման համար: Նախագծվող տարածքում բացակայում են շինարարության և կառուցվածքների վրա ազդող բնական երևույթները (սողանքներ, կարստ, փլուզումներ և այլն):

Բնութագրվող տարածքը գտնվում է ցուրտ կլիմայական շրջանում, որտեղ բնորոշ է ցամաքային կլիման: Բացարձակ նվազագույն ջերմասիճանը կազմում է -36°C, բացարձակ առավելագույն ջերմասիճանը՝ 38°C: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 498մմ: Գյումրին գտնվում է սեյսմիկ երրորդ գոտում, գրունտների հնարավոր արագացման առավելագույն մեծությունը կազմում է Amax=0.4g և ունի 8-9 և ավելի բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան: Գյումրի քաղաքը հարուստ է պատմամշակույթային, հնագիտական հուշարձաններով, բուսական և կենդանական աշխարհի խիստ բազմազանությամբ, մարգում

02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

հանդիպում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող կենդանական և բուսական տեսակներ: «Բարեկամություն» զբոսայգու տեղանքում չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքներ, ՀՀ Կարմիր գրքերում գրանցված կենդանական և բուսական տեսակներ:

Համաձայն հաշվետվության զբոսայգու տարածքը գտնվում է անմխիթար վիճակում, տարածքում առկա են կենցաղային և շինարարական աղբի մնացորդներ, բազմակի հատված կոճղաշիվային և մացառուտային անկանոն աճած բուսականություն, կիսաքանդ շինություններ՝ բեմական կառույց, երկու կիսաքանդ ջրավազաններ, կիսաքանդ ճանապարհային սալիկներ, որոնք ենթակա են ապամոնտաժման: Զբոսայգում բացակայում են ինժեներական հաղորդակցման կոմունիկացիաները և ենթակառուցվածքները: Ծրագրի շրջանակում իրականացվել է զբոսայգում առկա տնակային ավանում բնակվող անձանց վերաբնակեցում, մասնավորապես, շուրջ 25 ընտանիք ապահովվել են բնակարաններով: Զբոսայգու տարածքում առկա տնակային ավանը ներկայումս ամբողջությամբ ապամոտաժված է, ինչն իրականացվել է Գյումրիի համայանքապետարանի կողմից:

Տարածքում առկա են տաս ծառեր, որոնցից՝ համաձայն ծառագետի տրված եզրակացության, միայն 6 ծառեր են ենթակա պահպանման:

Զբոսայգու տարածքով են անցնում «Գյումրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին սպասարկող ստորգետնյա մալուխներ (6 ԿՎ), որոնք նախատեսվում են տեղափոխել՝ ԲԿ-ի այլընտրանքային հոսանքագծի վերանորոգման աշխատանքներից հետո:

Զբոսայգու տարածքի կազմակերպման հատակագծային լուծումներում հաշվի են առնված հինգ հիմնական գոտիները՝ հանգստի, սպորտային, խաղային, ժամանցային և հատուկ նպատակային գործունեության: Զբոսայգում նախատեսվում են նաև ծառայությունների տաղավարներ և գործառնական նշանակության տարածքներ:

Գործունեության ընթացքում ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 20291քմ, որից 1331քմ շինությունների, իսկ 18960քմ՝ արահետների և հարթակների կառուցապատման համար:

Համաձայն հաշվետվության զբոսայգու վերակառուցման և զարգացման աշխատանքները նախատեսվում են իրականացնել երկու փուլով.

Փուլ 1 - տարածքում առկա կիսաքանդ շինությունների քանդում և տարածքի մաքրում շինարարական աղբից (3000տ),

- արահետների և հարթակների հողային համահարթեցման, սալիկապատման աշխատանքներ (18960քմ),
- նախագծվող արահետների և հարթակների հատվածներում առկա կոճղերի (327 հատ) արմատահանում և տեղափոխում, ներառյալ՝ թփուտներից մաքրման աշխատանքներ,
- զբուսայգու ներքին ինժեներական կոմունիկացիաների՝ ջրամատակարարման (700 գծմ), ջրահեռացման (900գծմ), ոռոգման ջրագծի (1860գծմ) և էլեկտրամատակարարման ցանցերի իրականացման աշխատանքներ,
- հասարակական զուգարանի, էլեկտրական ենթակայանի, խորքային հորերի (2 հատ), ջրամբարների (յուրաքանչյուրը 50խմ տարողությամբ) և պոմպակայանի կառուցման աշխատանքներ:

Փուլ 2 - զբոսայգու տարածքի արդիականացման, հանգստի, ժամանցային, սպորտային և խաղային թեմատիկ գոտիների ձևավորման, ատրակցիոնների տեղադրման աշխատանքներ,

- հանրային և զբոսաշրջային գոտիների ստեղծման աշխատանքներ,
- զբոսայգու կանաչապատ գոտիներում ծառաթփուտային բուսականության ստեղծում/արդիականցում:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎՆԱՍԱԳՈՒՅՑԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎՆԱՍԱԳՈՒՅՑ ՀՊՏԿ ՍՊԿ
02543183
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Զբոսայգու տարածքում նախագծվում է 58 000քմ ընդհանուր մակերեսով կանաչ տարածքի ստեղծում և համաձայն կանաչ գոտիների բարեկարգման նախագծի, տնկվելու են 691 լայնատերև և փշատերև ծառատեսակներ սև սոճի, եվրոպական լինդեն, կեղծ ակացիա, արծաթե բարդի, կարմիր կաղնի, թխկի սրատերև, սովորական բռնչի, կեռիկավոր եղևնի, բշտիկավոր բռնչատերև, ասպիրակ ճապոնական, լացող ուռի, միջանկյալ արոսենի, դեկորատիվ խնձորենի, սովորական յասաման, 7951 լայնատերև և փշատերև թփեր, 29485 բազմամյա խոտաբույսեր 372 լիաներ:

Նորաստեղծ կանաչ տարածքների ոռոգումը նախատեսվում է ձեռքով ոռոգվող, ավտոմատ կամ կաթիլային եղանակով ոռոգվող, ժամանակավոր ոռոգվող և չոռոգվող տարածքների՝ ընդհանուր 1860գծմ երկարությամբ: Ոռոգման ջուրը վերցվելու է զբոսայգու տարածքում նախատեսվող խորքային հորերից՝ համաձայն տրամադրված ջրօգտագործման թույլտվության: Լուսավորության համար նախատեսվում է շուրջ 167 հատ հենասյուների տեղադրում:

Զբոսայգում ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի համաձայն, Խանջյան փողոցով անցնող d=160մմ քաղաքային ջրատարից: Կոյուղաջրերի և կենցաղային ջրերի արտաքին ջրահեռացումն, իրականացվելու է Խանջյան փողոցով և Գ.Նժդեհի փողոցով անցնող գործող քաղաքային կոյուղագծերին միացմամբ:

Էլեկտրասնուցման գործընթացը, համաձայն տրամադրված տեխնիկական պայմանի իրականացվելու է 6/04կՎ լարման տրանսֆորմատային ենթակայանի կառուցմամբ, որի սնուցումն իրականացվելու է «Գյումրի»-1 110/ 35/6 կՎ ենթակայանի 6կՎ ԲՍ-ից:

Համաձայն գնհատման հաշվետվության Զբոսայգում առկա բուսահողը գնահատվում է մոտ 75 400խմ, լրացուցիչ բուսահողի մատակարարում չի նախատեսվում: Զբոսայգում առկա բուսահողի մեկուսացում և ժամանակավոր պահեստավորում չի նախատեսվում:

Համաձայն հաշվետվության շինարարական աշխատանքների ընդհանուր մակերեսը կազմելու է 20291քմ: Շինարարական աշխատանքները տևելու են 8 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են տեխնիկական միջոցներ՝ բուլդոզեր, ավտոինքնաթափ, շարժական բետոնախառնիչ, թրթռագլդոն և այլն:

Համաձայն հաշվետվության շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից:

Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, բնառեսուրսներից ջուր՝ տարածքների ջրցանի, հողի գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային և տնտեսական կարիքների համար (24004.72մ^3/շին. ժամ): Շինարարական աշխատանքներում և բանավորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը նախատեսվում է վերցնել զբոսայգու տարածքին կից անցնող համայնքային ջրագծից:

Շինարարական աշխատանքների ընթացքում հոսքաջրերի առաջացում չի կանխատեսվում՝ հաշվի առնելով վերակառուցման աշխատանքների շրջանակը և տեխնոլոգիական լուծումները, բացի այդ աշխատանքները կատարվելու են ցանկապատված տեղամասում, ինչը բացառելու կամ նվազեցնելու է հնարավոր արտահոսքերը և արտանետումները տարածքից: Հնարավոր կեղտաջրերի առաջացման դեպքում հրապարակում նախատեսվում է կեղտաջրերի հեռացման տարա (≥5 խմ տարողությամբ), որտեղ կեղտաջրերի (բետոնաջրեր և այլն) հետերոգեն զանգվածի նստեցումից հետո, շին աղբի հետ հեռացվելու է աղբավայր, իսկ դեկանտված ջուրը՝ օգտագործվելու է ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում: Տեղումներից առաջացած հոսքաջրերը կհեռանան բնական ներծծմամբ և հեռացման այլ միջոցառում չի նախատեսվում:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ կենցաղային (մոտ 5կգ/օր), շինարարական աղբ (3000տ) և սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ (մոտ 25լ/շին.): Շինարարական թափոնները նախատեսվում է կանոնավոր տեղափոխել Գյումրու համայնքապետարանի կողմից թույլատրված՝ «Մուշ 2» թաղամասի հարևանությամբ գտնվող վայր:

Հաշվետվությունում ներառված են այլընտրանքային, զրոյական տարբերակների վերլուծությունը, ներկայացված տարբերակի հիմնավորումը:

Նախատեսվող գործունեությունը կատարվելու է երկարամյա մարդածին ազդեցության գոտում՝ տեղայնացված և կարճաժամկետ, ինչը չի առաջացնելու շրջակա միջավայրի վրա լրացուցիչ ազդեցություններ: Համաձայն հաշվետվության գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կապված են լինելու հողային աշխատանքների՝ փորման, բեռնման, սարքավորումների և շինարարական տեխնիկայի շահագործման արդյունքում օդային ավազան փոշու և ծխագազերի արտանետումների, աղմուկի մակարդակի բարձրացման, բետոնային աշխատանքների, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների հետ:

Նախատեսվում է օդային ավազանի, լանդշաֆտի, բուսական և կենդանական աշխարհի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի կարգավորման, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր և մոնիթորինգ.

- շինարարության ընթացքում, օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով ջրցան իրականացում,
- շինարարության ընթացքում մթնոլորտային օդ փոշու արտանետումների հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով՝ տեխնիկական սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, բացառելով՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը,
- շինարարական նյութերի, կուտակումների ծածկում՝ օդային ավազան արտանետումները նվազեցնելու նպատակով,
- շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարներից,
- քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման դեպքում, դրանց հատուկ, փակ, անթափանց տարաներում պահում,
- շինհրապարակում ընդհանուր թափոններից հողի, շինարարական և կենցաղային աղբի տարանջատում, տեղափոխում հատուկ հատկացված աղբավայր,
- շինարարական աշխատանքների ժամանակ շրջակա միջավայրը և գործունեության տարածքը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից և բացառվելու է տարածքից հեռացվող բուսականության բաց այրումը,
- արտակարգ իրավիճակների դեպքում համապատասխան կլանիչներով տարածքի մաքրում, աշխատողների անվտանգության ապահովում և այլն:

Միջոցառումների համար նախատեսված գումարը կազմելու է 164 952 հազար ՀՀ դրամ:

Փորձաքննական եզրահանգումներ. համաձայն գնահատման հաշվետվության նախատեսվող գործողությունները կատարվելու են գոյություն ունեցող կառուցապատված տարածքի սահմաններում: Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները (շինարարության փուլ)՝ համայնքի, բնական լանդշաֆտի, կենսաբազմազանության և շրջակա միջավայրի այլ բաղադրիչների վրա լինելու են փոքրածավալ, կարճաժամկետ և տեղայնացված կրելու են ժամանակավոր բնույթ: Գործունեության իրականացումը նպաստելու է Գյումրի քաղաքի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

հեռանկարային զարգացմանը, զբոսաշրջիկների հոսքի ավելացմանը, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի, հանգստի պայմանների բարելավմանը, հնարավոր նոր աշխատատեղերի ստեղծմանը: Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Շիրակի մարզպետարանը: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Գյումրի համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել տարածքի սանիտարական նորմերի պահպանմանը, գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկի և ճանապարհների առավելագույն ծանրաբեռնվածությունը:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Նախատեսվող գործունեության շինարարության ընթացքում ապահովել շրջակա միջավայրի, ինչպես նաև մարդու առողջության, անվտանգության և տեխնիկական անվտանգության ՀՀ-ում գործող նորմերի պահանջները:
- Անհրաժեշտ է ապահովել հաշվետվությունում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:
- Հաշվետվությամբ ամրագրված ծառերի, կոճղերի հատումը կատարել համայնքապետարանի թույլտվությամբ:
- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ»-ի կողմից ներկայացված Գյումրիի «Բարեկամություն» զբոսայգու վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝ Ա. Վարդանյան